



## 9. ԽՈՐԹ ԱԽՊՈՐ ԽՈՐԹ ՔՈՒՐԸ

Իլալ ա շիլալ մին մարթ, մին կնեզյ Մարթին անումը Հաջի  
Սայաթ ա իլալ, կնպանն էլ՝ ևանում: Տահանց խոխա լի իլալ:  
Տըեսալ ըն, վար առանց խոխա կըրըլական լըն կըենան, քլը-  
նացալ ըն պժուրուտան մին ախճիզյ պիրալ, անումը տիրալ  
Փարի: Մտածալ ըն, վար մին տղա էլ պըերին, վար քուր  
ու ախպըեր տառնան: Քյինամ ըն մի տղա յել պերում, անումը  
տինում Մահամադ:

Անց ա կենում մին քանի տարե, ախճիզյը նաև տղան մըծա-  
նում ըն, փըսըկվելի տառնում: Կյարումքը վար կյամ ա, հարն ու  
մարը եր ըն կըենում, քյինամ սարը՝ տավարը պահեն:

Օրերից մին օր տղան եր ա կըենում, թա քյինա բըզարան  
տես-տեն ինքյ օնե: Մին ուխտնասուն տըրեկան կնեզյ ասում ա.

—Ա՛ տղա հեյ, քու հար մըեռնե, մին վըեննը կաց:

—Նանե, հինչ ը՞ս ասում:

—Ատղա Մահամադ, էտ ա մըծացալ ըս, մըեծ մարթ տառալ,  
խե փըսակվում լը՞ս:

—Նանե, հօք օ՞ղիմ:

—Եեր Փարին օգի:

—Վայ, նանե, պա նա իմ քուր ա:

—Եատ ըս որխալ, քու քուր լի, նա փլանքյասին ախճիզյն ա,  
տու՝ փըլանքյասին տղան:

Տղան կյամ ա տռն, ասում.

—Փարի, ես քըեզ օգում ում:

—Համութ չի՞ քըեզ, հինչ դա՞լաթ ըս անում, մըեր հայությունումը տի պան չի կա:

Հլթավան յոր ա օնում, տամ, տղնն կլոխը ճըդում:

Օրերից մին օր տղան ըսկանում ա, վար հարն ու մարը սարան կյամ ըն: Վազ ա տամ քյընամ ըռըջնեն, կլոխը պտառած: Հարը-մարը վար տըեսնամ ըն, հըրցուփորց ըն անում, խըե՞ տը-հըենց ա: Տղան ասում ա:—Սաղ օրը տըզեքյը նի տառած տռնը, ասում ում խըե պե՞րում ըս, թըխալ ա կլոխըս ճըդալ: Հարը-մարը ասում ըն:—Վար իտի յա, թող նա մըեր աշկեն ըրվա հուզ, քյընան մինչև մըեր կյալը տար մին օրան ծմակում տեն քըցի, եբ:

Տղան կյամ ա ըխճիկանը յոր օնում, տանում մին խոր ծմակում շորերը հանում, պաց թողում:

Ժուկ ա անց կենում, ժամանակ ա անց կենում, թաքավըերեն տըզա Ալիխանն ուրան շըներավը քյինամ ա վըերս: Նա ծըմակըն մաշին տըեսնում ա մին դաշտանդ ախճիգի, յոր ա օնում, պերում տռն, ինքը տրան օզում:

Վար մին քանի վախտ անց ա կըենում, տահանց ինոնմ ա էրկու խոխա: Փարին շատ ա թիքիփանում: Ալիխանը ասում ա:—Եթե՞ քեցյեփ ըս: Ասում ա:—Դե քյընամ ըմ իմ ծընողնես տեսնամ: Ալիխանը եր ա կըենում, երեսուն սալդաթ նըհետը տինոնմ, Փարին էլ յոր ըն օնում, քյինամ: Շատ ըն քյինամ, թա խրեզի, մին ծըմակավ քյընալիս մըթնում ա: Տահանք քիշերը տեղ կենում ըն: Սալդաթնեն լոխ քոն ըն ինոնմ, մինը պահակ ա վըեննը կըենում: Փարին զարթին ա ինոնմ: Պահակ սալդաթն ասում ա:

—Փարի, եք ուրինը նըհետ խաղ անենքի:

—Զէ, ես թաքավըերու կնեգի, տու՝ սալդաթ:

—Դե վար կյամ չըս, խոխեքյըտ ըսպըննական ըմ:

—Էսպանում ըս, ըսպանըն, բայց կյալ չըմ:

Էտ սալդաթն էտ էրկու խուփոցը փըռնում ա, ըսպանում:

—Դե, միհենդյ եք խաղ անենքի:

—Դե վար տի յա, ըսպանըն, քյընամ ըլթըլավը ճոնը պերիմ ծորան:

—Զէ, վախում ում փախճիս:

—Դե վար վախում ըս, վըեննաս մին քյենդիր կապե, վար փախճիմ վուզ:

Էտ պահակը տըրա վըեննան քյենդիրը կապում ա, պաց թողում: Փարին քյինամ ա գալդան հընցում թա չէ, վըեննան քյեն-

զիրը ետ ա անում, ըլթըվեն օյնան կապում։ Պահակը տըեսնում ա, վար կյամ շի, թյինդիրան ծիք ա տամ, տըեսնում ա շըրըխկալավ ըլթավան ա կյամ։ Տա կըխ ա իյնում պանը հինչումն ա, տըրըք ցնում ա ուրան ծերքը վիրավորում, սըլդըթներեն եր կըցնում։

—Ա տընըշիներ, հինչ ը՞ քոն իլալ, զըլըզնեն եկեն խոխերյը կտուրեցեն, Փարին տարեն։

Սըլդըթնեն յըեր ըն կըենում փայտոնը լըծում, կյամ թաքավը երերեն տըղըն ասում։ Տա շատ բիթիփանում ա։ Տա թողենքը ըտըեղ։

Փարին քըլնում ա տըեսնում մին շորան վրեխճար ա պահում։ Թուրքելուր ծեն ա տամ։

—Չորան կարդաշ, Ալիխանը գյորմադին<sup>1</sup>։

—Վալլահ, բա՛չի, հել Ալիխանը գյորմադիմ<sup>2</sup>։

Ախճիգյը թյինամ ա շուրանեն կոշտը։ Չորանը մին կյառենութափան ա պիրտունուանում, քցում ըխճըկանը կըխըլ։ Ըխճըկանը տանում ա տոն, ասում ա.

—Խանում, քըղետե մին զուլուղի լըմ պըերալ։

—Եատ էլ լավ կինի, թող կյա քըզնըհետ վեխճարը պահե։ Փարին ասում ա.

—Խանում, ինձ տան գործեր տո, հանդ կարել լըմ քըլնամ։

—Դե, հինչ ը՞մ ասում, մինպյել տանը գործ ըրա։

Ալիխանն էլ սազը յոր ա օնում, էն պըհակեն նըհետ թյինամ շենքաշեն շոռ կյամ, տոն կյամ Փարիտն շենը։ Ախճիգյը թյինամ ա տըեսնում էրկու զարիք մարթ ըխպիրին զրաղեն։ Ծինանցում ա ։ Քյըլնամ ա տոն, ասում։

—Խանում, մին տարե յա ծեզ զուլուղ ըմ ըրալ, խնթըռում ում ուրուգյունըս թուլլ տաք էն աշըղնեն պերինքը ըստեղ։

—Լավ կինի, քյըլնամ պեր։

Ախճիգյը քյըլնամ ա ըշըղնեն պըերում տոն։ Փարին շուրանեն ասալ ա։ —Մին մընձ մըհակ յոր կալ, քյըլնամ տըռանը ըսպասե, հու վար տոնա կյա, կըթիեսո, Աշըղը վար ըսկսալ ա դովր անելը, Ալիխանեն հընգերը եր ա կինում, թա տոնա կյա, շորանը թըխում ա, տըրան ըսպանում։ Մինպյել ախճիգյն ա դովր անում, ախպըերն ա օղում տոնա կյա, թըխում ա ըսպանում։ Թաքավըերեն տղան ուրան կնպանը յոր ա օնում, քյըլնամ ուրան վաթանը։

<sup>1</sup> Չորան եզրայը, Ալիխանին շե՞ս տեսէլ (Ս. Ա.)։

<sup>2</sup> Ասուլած վկա, քուրիի, Ալիխանին բոլորովին շեմ տեսէլ (Ս. Ա.)։